Ամփոփ նյութ

Ա/Ձ ՌՈՒԲԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (ԼԻՑԵՆԶԻԱ 643) ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ Ա/Ձ Ռուբեն Հովհաննիսյան (լիցենզիա 643) փոխանակման կետի նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ արժութային գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար:

Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՈՐՈՇՈՒՄ
18/04/2024 **ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1/**137 **-Ա**
Ա/Ձ ՌՈՒԲԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (ԼԻՑԵՆԶԻԱ 643) **ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սույն որոշման նկարագրական մասում նկարագրված խախտումները թույլ տալու համար Փոխանակման կետի նկատմամբ կիրառել **նախազգուշացում՝ ապագայում նման խախտում թույլ չտալու հանձնարարականով**:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փոխանակման կետ մուտքագրվելու կամ Փոխանակման կետի՝ սահմանված կարգով լիազորված անձին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ**